ածները հրէաներ կամ բոշաներ եւս լինէին, ես գուցէ աւելի խստութեամբ կը բողոքէի:

Շարման-բկի պաշտպանութիւնը խիստ թոյլ գտնոեցաւ. այժմ առաջնորդը սկսեց փաստաբանել.

— Բոլորովին ճշմարիտ է ձեր ասածը, պարոն բժշկապետ, բայց պէտք է տեղային սովորութիւնները եւ հանգամանքները եւս ի նկատի ունենալ: Պատահում է, շատ ասպատակութիւններ են անում, ոչխարներ, ձիեր եւ այլ անասուններ են աւարի առնում: Կորուստը վերադարձնելու համար ուրիշ հնար չէ մնում, քան թէ յարձակում գործել եւ պարսից հպատակներից յափշտակել փոխարէնը:

— Այստեղ ինչո՞վ են մեղաւոր խաղաղ հպատակները, — պատասխանեց Ասլանը, փոքր-ինչ զայրացած կերպով: — Այդ աւազակները թէ՛ Պարսից կողմից եւ թէ՛ Տաճկաց կողմից՝ բոլորը քրդեր են, թող միմեանց միս ուտեն, եթէ տեղային կառավարութիւնները անկարող են զսպել նրանց գազանութիւնները: Բայց ինչո՞ւ նրանց միմեանց հետ ունեցած թշնամութիւնների պատճառով մէջտեղում պէտք է ոտնակոխ լինի, կողոպտոի խեղճ գիւղացին, թշոառ երկրագործը, որ բացի մի քանի անասուններից ուրիշ ոչինչ չունի իր ապրուստը հոգալու համար:

Քուրդ բէկի թուխ դէմքի վրայ երեւացին քրտինքի կաթիլներ, որ սրբեց նա իր շապկի քառանկիւնի ձեւով քարշ ընկած թեւքով: Սխալ կը լինէր մտածել, թէ ամօթից լինէին այդ կաթիլները: Այլ նրա սրտում բորբոքւում էր բարկութեան կրակը, թէ ինչպէ՛ս մի գաւուր համարձակւում է նրա երեսին անարգել նրան, իսկ ինքը չէ կարող ձեռքը տանել դէպի իր սուրը եւ պատժել եւրոպացի գաւուրի յանդգնութիւնը: Բայց նա զսպեց իր կատաղութիւնը եւ բաւական հանդարտ կերպով ասաց.

— Դուք, պարոն բժշկապետ, այնքան վատ մի համարէք ջալալիներին, որոնց ցեղապետը լինելու պատիւն ունեմ ես: Եթէ դուք լսած լինէիք այն օգնութիւնները, որ մենք մատուցանում ենք այս կողմերի քրիստոնեաներին, հաւատացած եմ, որ ձեր կարծիքը կը փոխէիք մեր մասին:

— Մեծ ուրախութեամբ, — պատասխանեց Ասլանը ժպտալով:

— Ես անպատշաճ եմ համարում գովել ինքս ինձ: Թող հայր խալիֆան (առաջնորդը), որին յայտնի են մեր ծառայութիւնները, թող նա վկայութիւն տայ:

Սրբազան հայրը սկսեց զանազան մանրամասնութիւններով պատմել, թէ շատ հանգամանքներում քրդերը մեծ օգուտ են հասցնում երկրին եւ մա-